

Նայա Մարի Աիդտ

# ՇՆԱԿԱՊԻԿ

Պատմվածքներ

Թարգմանիչ՝

Ալեքսանդր Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2017

Translation and production of  
this book was supported by

**DANISH ARTS FOUNDATION**

Naja Marie Aidt (Denmark). BAVIAN

Բնագիրը դանիերեն է: Թարգմանվել է հեղինակազորված անգլերեն թարգմանությունից:

**Աիդտ, Նայա Մարիա**

**ՇՆԱԿԱՊԻԿ. պատմվածքներ, Եր.: Գիտանք, 2017, 110 էջ.**

Սեղմ ու կտրուկ լեզվով՝ հեղինակը շարադրում է արտառոց և հաճախ առեղծվածային պատմությունների զույգերի հարաբերությունների մասին՝ պառակտված ընտանիքի, մայրիշխսան քաղաքի, անհավատարմության, բնակարան ներխուժած օտար կնոջ, ամուսնալուծվածների անխզելի կապի, երկսեռական դարձած տղամարդու, երկսեռական զուգընկերուհիների, հարազատ ու խորթ երեխաների, տղամարդու կյանքը փոխած մոծակի խայթոցի և սովորական թվացող այլ իրադարձությունների մասին:

Նայա Մարի Աիդտը բազմաթիվ մրցանակների հեղինակ է՝ ներառյալ Եվրոպայի հյուսիսային երկրների ամենահեղինակավոր Nordic Council's Literature Prize 2008 մրցանակի՝ *Շնակապիկ* (Bavian) վերնագրով պատմվածքների այս ժողովածուի համար: Բնակվում է Սան Ֆրանցիսկոյում:

ISBN 978-9939-810-36-2

© *Bavian* 2006 by Naja Marie Aidt & Gyldendal, Copenhagen.  
Published by agreement with the Gyldendal Group Agency.

© *Գիտանք*, թարգմանության և ձևավորման համար, 2017

## ԱՍՏՂԱԶԱՐԴ ԵՐԿԻՆՔ

Սթինեն գնեց ոստրե, թարմ թյունոս ու ապխտած սաղմոն: Մտածեց, որ լավ կլինի նաև մեծ ծովախեցգետին գնել, բայց փոխեց միտքը և ի վերջո խեցգետին վերցրեց: Նա վառվառն ու կարմրաթուշ աղջիկ էր և հրապուրել էր ձկնավաճառին: Եղանակը քամոտ էր ու ցուրտ. նրա հեծանիվը պատահաբար շրջվեց. ձկնավաճառը վրա վազեց, բարձրացրեց, բայց նաև տեղավորեց աղջկա բոլոր տոպրակները հեծանվի զամբյուղում. օգնելու նրա պատրաստակամությանը վերջ չկար: Նա ժպտաց, և աղջիկը ծիծաղեց. ձկնավաճառը խանդավառ թափ տվեց ձեռքը, երբ աղջիկը ի վերջո հեռացավ՝ երերալով բեռի ծանրությունից: Սթինեն շտապում էր: Ցած գցեց բանալիները: Ամենատգեղ ու ընկճված մարդիկ աչքին գեղեցիկ էին թվում: Աջ ու ձախ փող շաղ տվեց. մեծ փունջ շուշան, սպիտակ գինի, կարմիր գինի, ոգելից խմիչք, շամպայն, մանգո, տավարի միս, հաց ու թխվածք քաղաքի ամենաթանկ փռից: Այդ ամենը դժվարությամբ քարշ տվեց տուն և լոգանք ընդունեց: Բայց երկար չմնաց տանը: Սիրուց գրեթե խենթացել էր: Խոնավեցնող քսուք շփեց ամբողջ մարմնին, հարդարեց մազերն ու շպարեց դեմքը: Հագավ իր նոր ներքնագգեստը, ա՛հ, ժանյակազարդ ու փափուկ, այնուհետև զգեստն ու երեկոյան բարձրակրունկ կոշիկները. նա հագիվ էր քայլում, բայց *քայլեց*, ընտրություն չունեց: Այդ բոլոր առարկաները շատ գեղեցկացնող, թանկարժեք ու *տրամադրություն բարձրացնող* էին... և հիմնական պատճառն էին՝ դրամատան նրա հաշիվը դատարկելու:

Բայց նաև կար գեղեցկության սրահի այցելությունը, պարի դասերը, պղնձե կաթսան ու բնական նյութերից վերմակը: Էլ չեմ նշում բազմոցն ու երաժշտության մի ամբողջ հավաքածուն, որը Սթինեն գնեց նրան տպավորելու նպատակով: *Նրան*: Նիւսը եկավ հետկեսօրին, և իրենք ավելի քան կես ժամ համբուրվեցին միջանցքում: Ի վերջո տղան այնքան քրտնեց, որ քրտինքը կաթում էր մազերից, քանի որ դեռ չէր հանել վերարկուն ու գլխարկը: Ի վերջո աղջիկը իջեցրեց նրա տաբատի շղթան: Նրանք գլորվեցին մեղ նախասենյակի հատակին, և տղան պատահաբար պատառոտեց նրա շորը՝ կոնքից ցած իջեցնելիս: Նրանք քիչ մնաց ուշագնաց լինեին գրգռմունքից: Բայց հետո դա շատ արագ ավարտվեց, քանի որ նրանք չկարողացան զսպել իրենց: Աղջիկը հաճույքից տնքում էր, արցունքները հոսում էին այտերով: Տղան անդադար համբուրում էր նրա դեմքը, ուսերը, փոքր փափուկ մատները:

Հետո նրանք սովածացան: Տղան վառեց լույսը: Նրանք շատ խմեցին՝ մեկը մյուսի հետևից ճաշակելով համեղ ուտեստները, բայց եղածը *բավարար* չէր,

նրանք անհագ էին, գրեթե անհնար էր սպասել *հաջորդ անգամին*։ դեռ վեր չկացած հատակից, բազմոցից կամ մահճակալից՝ ցանկանում էին *նորից* զբաղվել դրանով, իսկ երբ արդեն ի վիճակի չէին էլի խնել սուրճ կամ գինի կամ ուտել ևս մի պատառ, նրանք գրեթե դժբախտ էին, որ պետք է սպասեն, մինչև որ կրկին կարողանան...

Ի՞նչ երջանկություն: Նրանք չէին կարողանում քնել, աշխատել, մտածել (բացի իրար մասին մտածելուց), չէին կարողանում ուտել (լոկ միասին էին ուտում), ծածկվում էին սառը քրտինքով, դողում էին և օրը առնվազն տասը անգամ զանգում էին միմյանց: Տղան նիհարեց: Աղջիկը հինգ կիլոյով գիրացավ: Անհասկանալի պատճառով տղայի ականջը երեք անգամ բորբոքվեց, աղջիկը տառապեց քոր եկող ցանցից, որը տարածվեց տղայի դեմքով մեկ, աղջկա մազերի զգալի մասը թափվեց, բայց այդ ամենը նրանց չէր մտահոգում, քանի դեռ կարող էին քսքսվել իրար՝ սեփական ոտքը քորող շան պես: Նրանք *քսքսվում* էին, հրում, հպվում ու փաղաքշում միմյանց, մոլեգնում էին, ճանկում ու ճզմում, բացվում էին ջրարգելակի պես, և իրենցից անհավատալի, վիթխարի ալիքներ էին հորդում. վաղեմի վիշտը, ուրախությունը և իրական *անցյալը* դուրս էին թափվում, երբ իրենք ազահաբար վայելում էին միմյանց ջրերը՝ թույլ տալով իրենց հեղեղել փաղաքշանքով, համբույրներով ու սիրաթոթով բառերով:

Այժմ նրանք իրոք հարբած էին: Նիլսը նրան ուտեցրեց թխվածքի կրեմը: Սթինեն լցվեց անսպասելի եռանդով, վեր թռավ երաժշտություն դնելու և գոռաց. «Իսկ հիմա թոնիքով ջին կխմենք», և նրանք խմեցին. Սթինեն սահեց Նիլսի գիրկը, որը հանկարծ ցանկացավ պարել, և դա *գրգռիչ* էր. իրենք միասին դեռ չէին պարել, զգայացունց էր, թե՛ *բեկումնային կետ*: Ընդմիջմանը նորից զբաղվեցին սիրով, այս անգամ աղջիկը հետ ընկավ խոհանոցի աշխատասեղանին, որտեղից մի մեծ դանակ ընկավ ու խրվեց հատակին տղայի ոտքից մեկ սանտիմետր հեռու, աղջկա ծոծրակը պարմեզան պանրի փոքր կույտում էր, իսկ տղայի ուսերը թրջվեցին կտրատելու տախտակին մնացած լոլիկի խյուսով: Բարձրախոսներից թնդում էր երաժշտությունը: Աղջիկը տնքաց, տղան մռնչաց: Սերմնահեղուկի հաստ սպիտակ շերտը ցած ծորաց աղջկա ազդրերի ներսով: Նա մի քիչ սրբեց մատով ու լրիվ լպստեց: Տղան լեփ-լեցուն էր ուրախությամբ ու երախտագիտությամբ: Այժմ տնքալու նրա հերթն էր: Նա բարձրացրեց աղջկան ու տարավ մահճակալին: Նրանք հարբած էին, աղջկա սիրտը խառնում էր, տղան ուզում էր միգել, բայց ոչ մեկը չցանկացավ փչացնել անմոռանալի պահը, ոչ մեկը չուզեց վեր կենալ և *լքել*

մյուսին: Նրանք քնեցին առանց կոշիկները հանելու: Հաջորդ առավոտյան խումարը ահավոր էր: Բայց սուրճ խմելու ժամանակն էր: Եվ ամեն ինչ նույն կերպ շարունակվեց: Նախաճաշեցին քաղաքի ամենաարտակարգ ճաշարաններից մեկում: Էլի սուրճ խմեցին: Հետո ձեռք-ձեռքի տված գնացին շարժանկար դիտելու և խավարում գրգռվեցին: Սեր արեցին գինետան զուգարանում: Էլի սուրճ խմեցին: Մի քիչ քնեցին (նրանք չէին *քնել*): Ամեն ինչ կրկնվում էր, անընդհատ, գրեթե հինգ ամիս:

Աշխատավայրում Նիլսը նստում էր սեղանի մոտ ու նայում հեռախոսին: Չէր կարողանում կենտրոնանալ, գործընկերները քմծիծաղում էին, որևէ մեկի դեմքին նայելիս՝ նրան էր տեսնում, լսում էր նրան բոլոր երգերում և աչքերը փակելով՝ մտապատկերում էր նրան գլուխը հետ գցած, նրա գեղեցիկ դեմքի մոլեգին արտահայտությունը, բաց բերանը, երբ հագուրդի ալիքները ճկում էին աղջկա մարմինը:

Ղա կործանում էր նրանց: Բայց իրենց պետքը չէր: Տուն գնեցին: Հետո ցանկացան գնալ Իսպանիա: Այնուհետև Նյու Յորք: Մոտոցիկլով շրջագայեցին Լեհաստանով մեկ: Ամուսնացան Լաս Վեգասում: Երեխա ունեցան: Եվ նրա ծնվելուց ընդամենը երկու շաբաթ անց նորից զբաղվեցին սիրով. նրանք պարզապես սեր էին անում մանկանը կերակրելու ընդմիջումներին, հոգնածության կամ կրծքի թթված կաթի խնդիր չկար, կային միայն *իրենք*՝ անզուսպ ու թեթևամիտ, իսկ այժմ կար նաև խոր, խանդավառ *սերը*. միասին իրենք ամենազոր էին, չկար մի բան, որը իրենք չկարողանային անել, աշխարհը դարձել էր մի վայր, որտեղ իրենք կարող էին հեշտությամբ ամեն ինչ նվաճել՝ ոչ մի բան չխնայելով, առանց վախի, որ այդ ամենը կարող է փլուզվել: Իրենց զգում էին վերափոխված և շարունակաբար քաջալերում էին մեկը մյուսին. *Սենք վերափոխել ենք մեկս մյուսին*, դա հրաշք էր, և երանությանը վերջ չկար:

Բայց հետո այնուամենայնիվ ինչ-որ բան պատահեց: Նիլսը տղամարդու հանդիպեց: Եվ այդ տղամարդը ավելի ու ավելի մտերիմ էր դառնում: Գործի բերունով նրանք շրջեցին երկրում. նույն ձեռնարկության աշխատող էին: Անառվա վերջն էր: Նրանք երաժշտություն էին լսում ինքնաշարժում նստած: Իրար ավելի ու ավելի մոտ: Հետո հանկարծ Նիլսի ամբարտակը ճեղքվեց: Ծորաց: Քանդվեց: Անպարզորոշ պատրանքները ակներև դարձան: Ցանկությունը անխուսափելի էր: Նիլսի մտքով երբևէ չէր անցել, թե ինքը իրականում *կհամարձակվի*: Բայց այդ տղամարդը համարձակվեց: Հյուրանոցում Նիլսը

հանկարծակի ծնկի եկավ ու *առավ դա*: Աստղագարդ երկինք էր, ամեն ինչ առկայծում էր: Այն, որ ինքը այդքան թուլամորթ է, հնազանդ, տվող ու վերցնող՝ պոռնիկի, երեխայի պես, պայթեցնում էր Նիլսի ուղեղը, բայց դա հենց այն էր, ինչը այնքան հաճելի էր, ծայրաստիճան հաճելի ու ազատագրող: Նիլսը զարմացած էր: Իրեն կայացած էր զգում, երբ տղամարդու մոտից գալիս էր Սթինեի մոտ՝ լրիվ ազատագրված, և գնում հակառակ ուղղությամբ՝ կենսուժով լի. հեշտությամբ կարող էր լինել կնոջ պատասխանատու, սիրող ամուսինը և իր երեխայի քնքուշ, ուշադիր հայրը, իսկ հետո բերանն առնել իր սիրելեանի առնանդամը և անել *այն ամենը, ինչ իրեն ասվում էր*:

Կատարյալ երջանկություն:

Եվ կինը: Նա զգում էր, որ իրենց հարաբերությունները օրեցօր ավելի լավանում են, թեև չէր հասկանում, թե դրանք ոնց *կարող* են եղածից ավելի լավը դառնալ: Հիացմունքով նայեց Նիլսին, երբ նա սրբվում էր ցնցուղ ընդունելուց հետո: Ձեռքերով փաթաթվեց նրա պարանոցին ու գրկեց: Նիլսը փեղկի մեջ առավ նրա հետույքն ու ներշնչեց մազերի բույրը: Նրանք ծիծաղեցին ու բացեցին լուսամուտը, որպեսզի գոլորշին դուրս գա: Հետո գնացին անտառ՝ զբոսնելու: Նրանց երեխան փորձեց ճոճվել ճյուղագերծ ծառաբների կիտուկին: Մի փասիան հաստեց արահետը: Անտառի գետինը խշխշում էր ու երերում ոտքերի տակ. փետրվարի մեղմ ու մառախլապատ օր էր: Նիլսը կանգնեց ու շրջվեց կնոջ կողմը. Սթինեն նորից ծիծաղեց: Նրա ձեռքերը սողակեցին ամուսնու շորի տակ ու գրկեցին մերկ իրանը: Նիլսը համբուրեց նրա աչքերը: Նրանք *այնքան երջանիկ* էին: Երկար ժամանակ՝ գրեթե երեք տարի ավելի ու ավելի երջանիկ էին. սիրելեանը բերեց ընկերոջը, և այժմ սպասարկելու երկու տղամարդ կար. Նիլսը զբաղված էր, բայց լիովին բավարարված: Մեղքի զգացման նշույլ իսկ չունեց: Որովհետև կինը նրան ուժ էր տալիս: Իրար այնքան ուժգին էին սիրում, որ լոկ միասին կարող էին տարիք առնել:

Բայց մի օր մուտքուղիում երեխան տեսավ հորը, երբ նա համբուրում էր մի տղամարդու: Աղջնակը տատի հետ գալիս էր մանկապարտեզից: Երեխան հասկացավ, որ դա սովորական համբույր չէ, որովհետև հոր ու տղամարդու համբույրը շատ երկար տևեց, բայց ամենաանհանգստացնող բանն այն էր, որ տղամարդը բռնել էր հոր ծոճրակը և կարծես հրում էր նրան *ցած*:

Երեխան քարացել էր տեղում:

- Ես տեսա, որ հայրիկը համբուրում էր մի չաղ տղամարդու, - ասաց նա մորը երեկոյան:

Մայրը ծիծաղեց:

- Այդ ի՞նչ անհեթեթություն է:

Նիլսը, որ խոհանոցում սրբում էր ափսեները, քար կտրեց:

- Երևի հայրիկի բարեկամներից մեկն էր, - ասաց Սթինեն ու երեխային դրեց անկողին:

Անուսի՞նը փոխում էր սալօջախի արտամղիչի լամպը:

- Լսեցի՞ր՝ աղջիկդ ինչ ասաց:

- Չէ, ի՞նչ:

- Որ քեզ տեսել է մի չաղ տղամարդու համբուրելիս:

Նիլսը ժպտաց:

- Չաղ տղամարդ համբուրե՞լ ես, քաղցրս: - Սթինեն չկարողացավ զսպել հռռռոցը:

Անուսի՞նը ճոճեց գլուխն ու ներս պտտեց լամպը:

- Երեխանե՛ր: Երևի անիծյալ Էդիպոսի բարդույթ է:

Նրանք ծիծաղեցին: Լամպը սպիտակ լույս արձակեց սալօջախի արտամղիչից: Բայց կինը մի պահ լռեց՝ եղունգով քերելով աշխատասեղանի ներկը: Հետո նայեց ամուսնուն լցված աչքերով:

- Անուշիկս, ինչո՞ւ ես լացում: Ինչ-որ պատճա՞ռ կա: - Նա գրկեց կնոջն ու շոյեց նրա մազերը:

Կինը հանգստացավ և հոտոտեց նրա թևատակը. եղևնու անտառ, հող, գոլ անձրև:

Նա ավելի զգույշ դարձավ: Այլևս ոչ մի համբուրվել մուտքուղիում: Հանդիպելու նոր վայրեր: Բայց և սեռահարաբերություն: Առնվազն՝ շաբաթը մեկ: Նա կախյալ էր դարձել, *կարիք* ուներ: Բայց հետո սիրեկանը հրաժարվեց: Գտել էր մի ուրիշի և ասաց, որ իրենց կապը *մարել* է: Հիասթափությունը դժվար էր թաքցնել: Նիլսը նոր ծածկ փռեց հյուրասենյակի հատակին: Դա օգնեց: Կնոջ հետ ավելի հաճախ զբաղվեց սիրով: Դա նույնպես օգնեց: Ժամանակ անցավ: Նրանց նյութական վիճակը ապահով էր: Ծնվեց երկրորդ երեխան: Նրանք օգնում էին միմյանց կատարել առօրյա գործերը, ուրախանում էին իրենց երեխաներով, նրանց կյանքը կարգավորվեց: Բայց հանկարծ մի ծնեռվա երեկոյան, երբ Նիլսը դեռ արթուն աշխատում էր, նրան կրկին համակեց ցանկությունը: Ուժեղ ու հրկիզող: Նա գնաց ինքնաշարժով քաղաքի կենտրոն և կայանեց մի գինետան առաջ, որին ծանոթ էր պատանեկան տարիներից: Ընկերներով զվարճանում էին՝ աշխուժորեն ու մեծամտորեն ծաղրելով այնտեղից դուրս եկող կաշվե զգեստով տղամարդկանց: Իսկ այժմ նա դուրս

եկավ խավարից բարձրահասակ, միջին տարիքի տղամարդու հետ, և նրանք գնացին մոտակա ակունք, որին անդամագրված էր այդ տղամարդը. այնտեղ հանվեցին, լվացվեցին, դա անելու տեղ գտան. շուրջը մյուսներն էլ էին զբաղված դրանով, և ծանր շնչառության ձայներն ու քրտինքի հոտը ծայրաստիճան գրգռեցին նրան:

Մի քանի տարի անց Սթինեն պատահաբար գտնում է իր երեկոյան կապույտ կոշիկները պատի պահարանի ներքևում, երբ այլ բան է փնտրում: Դրանց երեսին սուրճի հետքեր կան: Ժպտալով՝ շոյում է դրանք: *Այդ օրը ես ուտրե գնեցի, և նա պատառոտեց գեղեցիկ շորս:* Սթինեն մերկանում է՝ փորփրելով ներքնագգեստի դարակը: Այդ բանը մեծ է, և նա ուրախ է, որ ունի դա: Նիլսը գնել էր այդ բանը նրա համար, բայց հետո հասկացել էր, որ իրեն նույնպես դուր է գալիս, երբ Սթինեն դա կիրառում է նրա համար: Սթինեին զարմացրեց, որ ինքը նման բան է անում: Եվ որ ինքը նույնիսկ հաճույք է ստանում դրանից: Եվ զարմացրեց, որ Նիլսը նրան թույլ է տալիս դա անել: Բայց, փակելով պատի պահարանի դուռը, նա մտածում է, որ իրենք շատ *կապված են* մեկը մյուսին: Մենք նախանշված ենք միմյանց համար: Հետո հագնում է կոշիկներն ու նայում հայելուն: Դեռևս գեղեցիկ է: Աղոտ լույսով իր մաշկը փայլատ է ու սպիտակ: Նիլսը արդեն պառկած է մահճակալին՝ հարմարապես տեղավորված ու պատրաստ:

- Դու այնքան հիասքանչ ես, - շշնջում է՝ մոտ ձգելով Սթինեին: